ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առնձնահատկությունները կրթական գործընթացում

Հաստատություն՝ Կապանի <<Արծվանիկ>> ՆՈՒՀ

Դաստիարակ՝ Արեգա Օհանյան

Ղեկավար՝ Ժ. Ավետիսյան

2022թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. Զատկի ծես, երեխաների ներգրավվածությունը ծեսին
3. Ցերեկույթ <<Սուրբ Զատիկ կամ Հարության տոն>>
4. Եզրակացություն
5. Գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային ծեսը մշակույթի այն տարրն է, որն առավել պահպանողական է ազգային արժեքների պահպանման գործում: Ժողովուրդները հիմնականում տոնական օրերին են վերապահել ազգային խոհանոցի, ազգային տարազի, ազգային երգ ու պարի, ազգային խաղերի պահպանման ու ժառանգման գործը:

Ժամանակի փոփոխությունը մարդկանց հեռացրել է ծիսական առօրյայից և հաճախ որոշ ծեսեր դուրս են գալիս գործածությունից:

Ծեսը մարդու կյանքի կարևոր մասն է և իրենից ենթադրում է դինամիկ զարգացում: Յուրաքանչյուր սերունդ արտացոլվում է ծիսատոնական արարողակարգերում և դրանցից խուսափելով կարող ենք հանգել ծեսի վերացմանը:

Ազգային ծեսերի վերականգնման և յուրացման խնդրի լուծումը գտնվեց կրթահամալիրներում:

Մանկապարտեզում անցկացվող յուրաքանչյուր միջոցառում, ազգային տոնին նվիրված ցերեկույթ, զվարճություն խոր հետք է թողնում երեխայի հիշողության վրա և նպաստում անձի ձևավորմանը:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում սանի համար ազգային ծեսի ճանաչման ամենաարդյունավետ ձևը խաղն է: Ազգային ծիսական մանկական խաղերը նպաստում են երեխաների ֆիզիկական, մտավոր հմարավորությունների զարգացմանը: Երեխաների հարաբերությունները խաղի ընթացքում նպաստում են նրանց սոցիալականացմանը: Ծիսական խաղերը բացի հետաքրքիր ու տպավորիչ լինելուց զարգացնում են մանր և խոշոր մկանային մոտորիկան և ընդհանուր շարժողական համակարգը:

Ժողովրդական արվեստի տարբեր տեսակի նմուշների կիրառումը նախադպրոցականի հետ աշխատանքում ոչ միայն բարերար ազդեցություն են թողնում երեխաների ազգային դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքներում, այլև նկատելիորեն առարկայական են դարձնում ուսումնական պրոցեսը:

ԶԱՏԿԻ ԾԵՍԸ և ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԾԵՍԻՆ

Հիսուս Քրիստոսի Հարության տոնը կոչվում է նաև Զատիկ, որը նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից և վերադարձ առ Աստված:

Զատիկը Հայ Առաքելական եկեղեցու 5 տաղավար տոներից մեկն է:

Ենթադրություններ կան, որ այն հայերի նախաքրիստոնեական տոներից է, որի իմաստը եղել է բնության զարթոնքը, որը տոնվել է գարնան սկզբին:

Զատիկը շարժական տոն է, այսինքն նրա նշման օրը փոխվում է: Դրան նախորդել է քառասուն օր պաս պահելը:

Զատկին մարդիկ երկար են նախապատրաստվել՝ մատաղի միջոցներ են հավաքել, յոթ բաղարջ են թխել, ձու են հավաքել, հրաժարվել են խնջույքներից, հարսանիքներից, մաքրությամբ են զբաղվել, տարբեր միջոցներրի են դիմել հիվանդություններից, հրդեհներից, երաշտից, ջրհեղեղներից ազատվելու համար: Տոնի նախօրեին և տոնին մարդիկ միմյանց ողջունել են Քրիստոսի Հարության առթիվ, մասնակցել են պատարագի, հավաքվել են ծիսական սեղանի շուրջ, պասից դուրս եկել:

Զատկի խորհրդանիշները.

Ձու- Զատկի ծեսի գլխավոր խորհրդանիշը ձուն է: Ձուն առանձնահատուկ տեղ է գրավել պտղաբերության հնագույն ծեսերում: Այն համարել են աշխարհի օրինակ. դրսի կեղևը՝ երկինքը, սպիտակ թաղանթը՝ օդը, սպիտակուցը՝ ջուր, իսկ դեղնուցը՝ Երկիրը:

Ձուն ներկել են կարմիր գույնով, որը խորհրդանշում է Քրիստոսի թափած արյունը: Այն Զատկի ծիսակատարությունների մեջ կարևորվում է հատկապես պասը լուծելիս: Մեր նախնիները պահքից անմիջապես հետո ձու են կերել: Զատկի տոնական ձվերը դրվում են աճեցված ցորենի ծիլերի մեջ, որը կոչվում է *ածիկ*:

Ածիկը համարվում է մեռնող ու հառնող կյանքի խորհրդանիշ: Ցորենը ցանում ես՝ մեռնում է, հետո ծլում է ու միջուկից դուրս է գալիս կանաչ ծիլը՝ խորհրդանշելով նոր կյանքի սկիզբ:

Զատկական կերպարներ.

Զատկական կերպարներից է Ուտիս տատը, Պաս պապը, Ակլատիզը, որոնց հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում նախակրթարանի սաները: Այդ կերպարները պատրաստելուց երեխաները ակտիվ մասնակցություն են ցուցաբերում:

Նախադպրոցական հաստատությունում Զատկի տոնին նվիրված միջոցառումները կազմակերպվում են՝ պահպանելով տոնի բուն խորհուրդն ու արարողակարգը: Նախապես ընթերցվում են գեղարվեստական գրականության, բանահյության տարբեր ժանրեր:

Կազմակերպվում են ուսուցողական, ճանաչողական, ազգային, ծիսական խաղեր (<<Չիք-չիք, աղամ-աղամ>>, <<Զու գլդորիկ>>, <<Զու կոտրոցի>> <<Խնոցի-խնոցի>>և այլն): Այդ խաղերը կարելի է խաղալ ինչպես համապատասխան ծեսի, այնպես էլ ցանկացած ժամանակ՝ անհրաժեշտության դեպքում:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ երեխաները ծեսի նախապատրաստման և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, գիտելիքներ ձեռք բերելով ու փոխանցելով յուրացնում են այն:

Տեխնոլոգիական աշխատանքը սանի մտածողության, երևակայության հզոր միջոցներ են: Սաները ծանոթանալով տարատեսակ նյութերին՝ թել, կտոր, փետուր, ցորենի հասկ, սկսում են հորինել այն կերպարը, որը պետք է պատրաստեն: Այս աշխատանքի ընթացքում երեխաների մոտ ընդլայնվում են երևակայությունը, հորինելու, մտածելու հմտությունները:

Կերպարային ծիսական տիկնիկներ պատրաստելու ժամանակ սաներին բացատրում ենք դրանց նշանակության մասին: Օրինակ՝ Ուտիս տատը և Պաս պապը ներքին խորհրդանշական իմաստ և կապ ունեն միմյանց հետ:

Պատրաստեցինք և ձևավորեցինք տիկնիկներին շատ պարզ միջոցներով՝ փայտ, հայկական նախշերով կտոր, կոճակ և այլն: Նույնպիսի աշխատանք կատարեցինք Ակլատիզ տիկնիկը պատրաստելու ժամանակ:

Կենդանի, ազատ միջավայրում մեր սաները խաղարկում են ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, իրացնելով իրենց հմտությունները:

Միջառարկայական կապը՝ ծեսի նախապատրաստական շրջանում իրագործելիս.

Երաժշտություն-երեխաները կարողանում են կատարել ծիսական և հայկական ժողովրդական երգեր,

պար- գիտեն, կարողանում են կատարել ծիսական և այլ հայկական ավանդական պարեր:

Խոսքի զարգացում- գիտեն տեղեկություններ Զատկի ծեսի մասին, ավանդություններ և զրույցներ, զատկական ասացվածքներ, բանաստեղծություններ: Կարողանում են պատմել իրենց կատարածը և գեղարվեստորեն ներկայացնել այն:

Ֆիզկուլտուրա- երեխաները կարողանում են խաղալ ժողովրադական զատկական խաղեր, հմտորեն տիրապետում են դրանց:

Էկոլոգիա- կարողանում են պատրաստել զատկական ածիկ, գիտեն այն բույսերը, որոնք օգտագործվում են ծեսերին և ունեն իրենց տարիքին համապատասխան գիտելիքներ դրանց մասին: Նախ ափսեի մեջ հավասարաչափ տարածում ենք բամբակը, այնուհետև ցողում ենք ջրով և ցանում սերմերը: Սակայն այսքանը դեռ բավական չէ, որ սերմերը ծլեն: Մենք երեխաներին սովորեցնում ենք, թե ինչպես պետք է խնամեն և հոգ տանեն, որ իրենց սերմերը ծիլ տան, կանաչեն: Երեխաները հասկացան, որ սերմերը կծլեն միայն արևի ջերմության և ջրի շնորհիվ:

Կերպարվեստային գործունեություն- երեխաները կարողանում են պատրաստել զատկական պարագաներ՝ Ակլատիզ, ՈՒտիս տատ, Պաս պապ, Կենաց ծառ, խաչբուռներ:

Խոհանոց- գիտեն զատկական սեղանին մատուցվող կերակուրները՝ եփած ձու, չամչով փլավ, եփած ձուկ և այլն:

Այս ամենը իրականացվում է երեխաների ակտիվ մասնակցությամբ, նրանց ներգրավելով բոլոր աշխատանքներում, քանի որ երեխաների համակողմանի դաստիարակության միջոց է աշխատանքային դաստիարակությունը:

Նախակրթարանի սաների հետ կազմակերպեցինք <<Սուրբ Զատիկ կամ Հարության տոն>>, որի գլխավոր նպատակը ազգային մշակույթի յուրացումն է:

Սովորողներին ծեսը պետք է մատուցել դյուրին և մատչելի, նրանց հասկանալի լեզվով և գործողությամբ: Երեխան պետք է ծեսը ընկալի որպես հաճելի ինչ-որ բան, որի մեջ կա խաղ, հումոր, սիրած երգ, ոտանավոր: Այդ դեպքում միայն կապահովենք աշխատանքի արդյունավետությունը: Ստորև ներկայացնում ենք միջոցառման սեղմագիրը:

ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ <<ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ ԿԱՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆ>>

Նպատակը՝

- ազգային մշակույթի յուրացում
- ազգային ժառանգության փոխանցում

Խնդիրները՝

- ուսումնասիրել Զատկի ծեսը և ծիսական միջավայրը
- առանձնացնել ծիսական այն գործողությունները, այն կերպարները, որոնք առանցքային են, որոնց միջոցով իրականացվում է ծեսը
- յուրացնել ազգային, ծիսական երաժշտական նյութը

Մասնակիցները՝ ավագ և միջին խմբի սաներ

Կահավորումը՝ ազգային տիկնիկներ՝ ՈՒտիս տատ, Պաս պապ, Ակլատիզ, խաչբուռներ, կենաց ծառ, ներկած ձվեր, ածիկ,միջոցառման ընթացքի համար անհրաժեշտ այլ պարագաներ:

Միջոցառման ընթացքը՝

Հնչում է ազգագրական երաժշտություն՝ Ծաղկաձորի: Պարով մտնում են ավագ խմբի աղջիկները:

1-ին սան՝ Բարի լուրի զանգեր զարկին՝
Զնգզնգալեն անո՜ւշ-անո՜ւշ,
Լույսը բացվեց մեր աշխարհին՝
Զատկի լուրով անո՜ւշ-անո՜ւշ:

2-րդ սան՝ Զատի՜կ է, Զատի՜կ է,
Նավակատիկ է,
Չամչահատիկ է:

3-րդ սան՝ Զմեռն անցավ, գարուն եկավ:

Պասը գնաց, Ուտիսն եկավ:
Քաշվի, կորի այն Պաս պապիկ,
Տատիկն եկավ, բարով եկավ, խերով եկավ:

Կրկին երաժշտություն է հնչում, երեխաները արտասանում են բանաստեղծություններ Զատկի մասին և երգում են <<Ա՜խ գարուն է>> երգը:

1-ին սան՝ Զատիկը Քրիստոսի Հարության տոնն է: Այն տոնում են քրիստոնյա ժողովուրդները՝ մեծ հանդիսավորությամբ, եկեղեցում՝ պատարագով:

2-րդ սան՝ Զատիկը խորհրդանշում է գարնան զարթոնքը, բնության ծաղկումը: Գիտեք, որ այն կապ չունի փոքրիկ միջատի անվան հետ: Այն նշանակում է զատում, բաժանում մեղքերից:

Դաստիարակ՝ Իսկ դուք գիտեք ինչ կերակուրներ են պատրաստում հայերը Զատկի տոնին:

Երեխաները պատասխանում են.

- Փլավ են եփում
- Ձուկ են եփում
- Գաթա են թխում
- Ձու են եփում:

3-րդ սան՝ Ձուն ներկում են կարմիր գույնով, որը խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի թափած արյունը: Հին ժամանակներում հայերը ձուն ներկել են <<Որդան կարմիր>> ներկով:

Երեխաները պարում են ազգագրական պար՝ Թամզարա:

Դաստիարակ՝- Երեխաներ գիտեք Զատկի տոնին նախորդող շաբաթվա յուրաքանչյուր օր ունի իր նշանակությունը և կարևորությունը: Ավագ երկուշաբթին կոչել են Զրաղացպանի օր: Այդ օրը ցորենը տարել են ջրաղաց, աղել, ալյուր ստացել և հաց են թխել՝ պատրաստվելով Զատկի տոնին:

Երգ՝ <<Զաղացս մանի-մանի>>

Դաստիարակ՝ Ավագ երեքշաբթի օրը խնոցի են հարել, յուղ պատրաստել՝ չամչով փլավ եփելու համար:Ավագ երեքշաբթին կոչել են Խնոցու օր:

Երգ՝ <<խնոցու երգը>>

Հարի, հարի խնոցի,
Մեջդ բարի խնոցի,
Ունկդ բարակ խնոցի,
Մեջդ կարագ խնոցի:

Փլավ կեփեմ եղ չկա,
Փեսեն եկավ տեղ չկա:
Հարի, հարի խնոցի,
Մեջդ բարի խնոցի:

Դաստիարակ՝ Ավագ չորեքշաբթին կոչվում է նաև <<Չիք չորեքշաբթի>>: Այդ օրը մարդիկ մաքրել են իրենց շրջապատը աղբից, նաև իրենց ներսը՝ չար մտքերից, վնասակար սովորույթներից:
Խաղ՝ <<Չիք-չիք, աղամ-աղամ>>
Երեխաները ընկույզները հարվածում են իրար ասելով.

-Չիք-չիք ինչը չիք?
-Չիք-չիք սուտը չիք…

-Աղամ-աղամ ինչը աղամ?
-Աղամ- աղամ լացը աղամ…

Դաստիարակ ՝ Ավագ հինգշաբթի օրը այգեպանները մտել են այգի և վատ բերք տվող կամ բերք չտվող ծառերին կացնով հարվածել-վախեցրել են, ասելով՝
1-իս սան՝
-Բերք ես տալու տուր թե չէ կկտրեմ:
Դաստիարակ՝ Ավագ ուրբաթը Հուդայի մատնության օրն է, այդ օրը մարդիկ պետք է ասեղով ինչ-որ բան ծակեին կամ դարբինները յոթ անգամ պետք է հարվածեին զնդանին՝ ի նշան Հուդայի մատնության:
Երգ՝ <<Էսօր ուրբաթ է, պաս է>>,
<<Զատիկ-զատիկ>>:

Զատիկ-զատիկ
Զատիկ-զատիկ Տերն հարություն է առել
Զատիկ-զատիկ հավը ձվեր է ածել
Զատիկ-զատիկ կարմիր գույնով ենք ներկել
Զատիկ-զատիկ չամչով փլավ ենք եփել
Զատիկ-զատիկ քաղցր գաթա ենք թխել
Զատիկ-զատիկ ուրախ Զատիկ է եկել:

Երեխաները արտասանում են ասույթներ Զատիկի մասին:
_ Զուկ կեր, գինի խմիր,

Վա՜յ ձկան գլխին:
Զուկ կեր, ջուր խմիր,
Վա՜յ ուտողի գլխին:

_ Ակլատիզը փետելով
Զատիկը շուտ չես բերի:

Հնչում է ազգագրական երաժշտություն, պարով ներս է մտնում Ակլատիզը: Հարցնում է.
_Զու կերել եք?

_Չէ , չէ,-պատասխանում են երեխաները:
_Ա՜յ ապրեք դուք, շա՜տ ապրեք, թե չէ էս կծու բիբարով ձեր բերանները կվառեմ:
Ակլատիզի յուրաքանչյուր հարցումին երեխաները բացասական պատասխան են տալիս:
Մտնում է ՈՒտիս տատը, երեխաները բացականչում են
_Ուտիս տատն եկա՜վ, Ուտիս տատն եկա՜վ,
1-ին սան՝ Ծաղկած են դաշտերը ծիլ-ծիլ խատուտիկ,
Եվ ամեն ժամ կավետեն Զատիկ:
Զատիկը եկել է, թող աշխարհ ցնծա,
Կարմիր հավկիթներ բերել է ընծա:
Ուտիս տատը համոզում է Ակլատիզին, որ նրա գնալու ժամն արդեն հասել է: Ակլատիզը չի ուզում համոզվել, երեխաները քշում են նրան, ասելով
_ Տիզ-տիզ Ակլատիզ,
Մազդ բիզ-բիզ Ակլատիզ,
Պասը գնաց, Զատիկն եկավ,
Այծն էլ խոտը կերել է:
Դաստիարակ ՝ վրա է հասնում Ավագ շաբաթ օրը: Մարդիկ մեծ ու փոքրով հավաքվել են խոհանոցում և տարբեր տեսակի կերակուրներ են պատրաստել, ձվեր ներկել՝ պատրաստվելով Սուրբ Զատկի տոնին:
_ Հե՜յ, հե՜յ ձեզ ավետիս,
Ձեզ ու մեզ մեծ ավետիս,
Քրիստոնյաք արթուն կացեք:
Եվ միմյանց Զատկի առավոտյան ողջունել են հետյալ խոսքերով.
_Քրիստոս հարյավ ի Մեռելոց
_Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի:
Միջոցառման ավարտին երեխաները խաղում են զատկական խաղեր՝ <<Ձու կոտրոցի>>, <<Կոխ>>, <<Աքլորակռիվ>>, <<պարան քաշոցի>>:

GIF

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ուսումնասիրելով մասնագիտական գրականությունը և կատարելով աշխատանքը, եկա հետևյալ եզրահանգման՝

- Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը, որոնց իրականացումը կրթահամալիրում նպատակ ունի երեխաներին փոխանցել մշակութային ժառանգության արժեքները՝ նպաստելով երեխաների հայեցի դաստիարակությանը և իրական արժեքների ձևավորմանը:
- Ճիշտ է մանկահասակ երեխաները ամբողջովին չեն կարող ընկալել ծեսերի իմաստն ու նշանակությունը, սակայն նրանց ճիշտ ուղղորդելով և օրինակ ծառայելով կարելի է որոշակի արդյունքի հասնել:
- Գործնական աշխատանքը ցույց տվեց, որ նախադպրոցական տարիքի երեխան ծիսական բնական անկաշկանդ միջավայրում կիրառում է իր գիտելիքները, հմտություն է ձեռք բերում, զարգանում է երևակայությունը, կարողանում է ազատ արտահայտել իր միտքը:
- Կարծում եմ, միջոցառումն ավելի հաջողված կլիներ, եթե լինեին ազգային տիկնիկների լայն ընտրանի և երեխաների տարիքին համապատասխան ուսումնական-ուսուցողական տեսագրություններ:
- Ներկայացված նյութը խորհուրդ տվեցի կիրառել ընտանիքում, կարելի է անցկացնել նաև այլ հաստատություններում: Չէ-որ պետք է պահենք ու պահպանենք մեր ազգային մշակույթն ու ավանդույթները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր (5-6 տարեկաններ)
2. Մխիթար Սեբաստացի կրթահամալիր քոլեջի կայք-էջի տեսագրություններ
3. Հրանուշ Խառատյան <<Հայ ժողովրդական տոներ>>
4. Ռ. Հարոյան <<Զատիկ>>